

Եւ՝ Բ. որ գիտենայ զնշանն հիւանդութեան եւ զպատճառն ցաւուն հասկնայ որ ստածումն իրենն հեշտ լինի: Եւ Գ. որ ստածումն եւ թպտիր ստածման այն իրօքն որ հիւանդութիւնն այնով փարատի, եւ բնութիւնն զօրանայ եւ առողջութիւնն ի յոնն գայ: Եւ Գ. այն է որ զինչ բժիշկն ասէ նա հիւանդն զամէնն կատարէ անպակաս: Եւ շատ հիւանդութիւն կայ որ ի յայս Բ. իրացս ի զատ չէ, կամ ի տաքէ կամ ի հովէ է, մին չէ. բայց Բ. բաժանեցաք զտիբերն՝ վասն տաքութեան եւ հովութեան եւ պատճառ հովութեան եւ նշանն եւ զամէնն Ա. տուփ եմ արեր, եւ ըստածումն այլ տուփ մեմ արեր, եւ յառաջն զցաւուն անունն, եւ յետոյ զպատճառն եւ զնշանն, եւ այլ ի վայր ստածումն բժշկապետաց խօսքն այլ յիշեմ. թէ մէկ իմն որ բարիխրատ վարդապետիմն խօսքն բարի լինի, Ա. այլ վարդապետին խօսքն դիւրաւ հասկնայ, եւ հակառակ չգայ, եւ խնդրուածքս կատարի Աստուծով ամէն:

Եւ զամենայն իբք պիտի որ յայս գիրքս գիտենան, եւ պատճառն այս տփերուս այն է որ դուն զպատճառն եւ զնշանն եւ զստածումն որ ի տաքութենէ լինի, եւ կամ, ի հովութենէ, եւ կամ, մէկ հիւանդութիւն գտնաս ի Բ. տուփն, եւ զ. Բ. բժշկին զխօսքն գրես ի Ա. ցաւն ի Ա. թղթին երեսն, եւ այս գրքիս ձեւն խիտ աղէկ եւ հաւնելու է, եւ կարգացօղին դժար եւ ծածուկ չլինի եւ յորժամ աղէկ միտ զնես նա իմանաս. զպատճառն եւ զխօսաց զհամն, եւ զնշանն տաքութեան եւ զհովութեան զստածումն թէ որպէս հրամայած: Եւ այս ուսումն այնոր համար փառաւոր եւ պատուական է, բայց թէ չիճանաչէ զպատճառն, եւ զնշանն թէ ուստ իցէ կամ յարենէ է կամ ի սաֆրայէ կամ ի պաղղամէ, կամ ի սավտայէ է, եւ զայս ամէնն պիտի որ աղվոր իմանաս որ ստածելն քեզ հեշտութեամբ լինի: Եւ ցանգ գրոցս յառաջն համարած է թվով: Եւ երկրորդն շինած է ի վերայ այբուբենին եւ այն, որ Ա. Ա. դեղերուն զօրութիւն է եւ այն որ խառնված թարբիպնուն զօրութիւն է այն այլ ի վերայ այբուբենի է, եւ թէ քեզ պիտենայ որ գտնուս զօշինդրն կամ զանիսոնն կամ զանուխն, դու տես ի վերայ այբին, եւ թէ ուզենաս որ գտնուս զբրինձն, ըզբակլան, զբացվինէկն, դու տես ի վերայ բէնին, եւ թէ ուզենաս որ գտնուս զգարին, զգառն, զգաբձին, դու տես ի վերայ գիմին, եւ այսպէս գտիր կարգաւ մինչեւ ի քէն, եւ զխառնված դեղերն այլ այսպէս գտիր, որպէս՝

ասանասիան, եւ ապքաման, եւ աստաբիսալիմն, եւ ինչ նման է սոցա. ի վերայ այբին տես, եւ զմաճունն ի վերայ մէնին տես, եւ զճուարիշն՝ ի վերայ ձէին տես, եւ զարապլն ի վերայ շային, եւ զտլէն՝ ի վերայ տիւնին եւ զուրոն ի վերայ զատին տես այսպէս գնայ կարգաւ մինչեւ վճարն ի գրոցն եւ ի գրոցն վճարքն զփոխանն է գրած եւ այլ յետեւ զերատն է գրած, զգեղիանոսի եւ զբագարատայ, եւ այլ ի վերջն քիշմն բան առաք ի զախիրայի խորոզմի շահէն եւ որպէս զէտ ստածումն է եւ, Ա. Ա. դեղերու զօրութիւն է, եւ այլ իմացիր եղբայր որ գիրքըս մեր խօսքն չէ, առաջի իմաստասիրացն եւ բժշկական իմաստասիրացն եւ վերջին փիլիսոփայիցն, եւ այս ամենայն բժշկացքն խօսքն է, որ է բագարատն, եւ գեղիանոսն, եւ արձիճանիսն, եւ Ֆլուան, եւ արպիսասոսն, եւ ըռուֆօսն, եւ զէվճանիսն, եւ մասրճուէն, եւ յէսուն, եւ մասուային որդին, եւ ապուճարէհն, եւ մասէհն, եւ մահամատ զաքարիային որդին եւ սապիթկուռանն, եւ հունան, եւ իսաղն, եւ սինային որդին, եւ այլ բազում ժողովուրդ որ ի յայս արհեստս շատ աշխատեր են, մենք զսոցա գիրքն ընտրեր ենք եւ գրեր շատ աշխատանօք, եւ յայսմհետէ գրեցի շատ աշխատանօք զայս ձեռամբ իմով, եւ շատ դժուարութիւն եւ պատահումք եմ քաշեր ի յանօրինաց, եւ ի յայլ աղգաց, ի դատաւորաց, ի թագաւորաց եւ իշխանաց, եւ շատ գրեանք էի ժողովեր ի յարապաց եւ ի պարսից, եւ ի թուրքաց, շատ զարիպութիւն էի քաշեր, եւ զժամանակին զչարն եւ զբարին եւ զպատահումքն էի կրեր, զհարստութիւն եւ զաղքատութիւն էի քաշեր, եւ ի յերկրէ ի յերկիր շատ բժշկութեան զարհեստն էի գործեր եւ փորձեր էի յիմ միտքն շատ դեղեր, եւ թարբիպնի եւ շատ ծառայեր էի հիւանդաց եւ մեծամեծաց եւ իշխանաց եւ հազարապետաց եւ հարիւրապետաց եւ քաղաքացոց եւ աղքատաց մեծի եւ փոքու, եւ շատ չար եւ բարի էի տեսեր, եւ հանց եղայ ես հիմայ որ ոչ հարստութեան կուխնդամ եւ ոչ աղքատութեան կու տրտմիմ, եւ զամենայն չարն եւ զբարին մէկ կու տեսնում եւ անհոգել եմ այս ամենայն ցանկութենէն կենցաղոյս, եւ յուսամ ի տէր աստուածն մեր յիսուս քրիստոս որդին միածին եւ երկոտասան առաքեալքն եւ սուրբ Գրիգոր լուսաւորիշն հայաստանեայց, եւ ՅԺԸ. հայրապետքն. Եւ տէր Աստուածն մեր արքայութիւն պատրաստէ ձեզ եւ մեր ծնողացն եւ անարժան ծառայս